

ԲԱՐԱՔՆ. ՆՈՐ ՇԱՐՔԻՆ

ԱՌԹԻԻ

(Համդէս Ամսօրեայ, 1929, էջ 315-19)

Կը շարունակէ պատուարժան հանդէսն իր Բարքն. Գիտդ. Նոր շարքը. և մենք, նոր բան մը լսելու և սորվելու անկեղծ տենչով՝ կը կարդանք զայն, և ահա աւագ, «էք ինչ ՆՈՐ»:

Մայիսի Թուով (1929, էջ 315-19), ռանի 6 բառ. որոց երկուքը՝ (Թ. 9 Գեթմակ, Թ. 12 Գաւնդ) արդէն ուրիշներն ուսումնասիրած են, որով... ի՞նչ միւս չորսսին վրայ, Հեղինակին հանդէպ պարտու պատշաճ յարգանք, կ'ուզէինք մենք ալ անդրադառնալ:

Նախ 8 Թուով ԳԱՌՆԵԻ բառ մը կ'առնէ, որուն թէ «կազմութիւնը», թէ «քերականական կապակցութիւնը անմեկնելի» կը գտնէ. «ուղղութեան և հարազատութեանը մասին՝ լրօրեն» (միշտ ինքը, Հ. Վարդանեանը) կը կասկածի», «ընդօրինակողին անմատչելիութեան» կը վերագրէ «սարօւրինակ այս բառը», որով «չնչուած կը բաղձայ տեսնել» նաև զայս: Բայց այդ գէշ դրութիւն է. մեր ամէն չհասկցածը պիտի ջնջենք... Հուսկ, կը գանգատի, թէ «Բաւարաններու մէջ չէ հիւրընկալուած գոտեհի ձևը»:

Եւ երբեք ալ պիտի չհիւրընկալուի: Լատին բառագրոց մէջ ալ, ամենեւին կաւելի չէ գտնել *Jovis, tulire, susferre* ևն ձևերը, որովհետև բառգիրքները՝ աւուանց Եզ. Ուղ. հոլովը կը դնեն, ինչպէս ամէնքը գիտեն. նոյնպէս է մեր բառին համար՝ Հարցը, ուրեմն, դիւրին է. Գրանէի բառ մը գոյութիւն չունի հայ լեզուին մէջ, հոս Սեւ. հոլով է, որուն Ուղղականը՝ ԳրանեՍԷ է, Սեւ. գառնէի (տ. Առձ. Բռ. էջ 204, ա. ա)՝ համ. նաւորդնայ, անդեայ, առհաւ.

ւատչեայ, աւետչեայ, կհեայ, Հրեայ, դուգ. նաքհայ, քրիստոնեայ, Հանդ. Ամսօրեայ ևն, որ Սեռականի մէջ կ'ըլլան կհեի, Հրեի, դուգնաքի, քրիստոնի, Հանդ. Ամսօրեի ևն: Իսկ «ի բաց մերկասցուք զմորթն գառնէի», (Ոսկը. Մեկն. Պատգ. Ա, էջ 299), ըսել է. «մէկիւր թողունք (գառնեակական կամ գառնուկների կամ լաւ ես) գառնուկի մորթը», և ըլլանք ճշմարիտ գառինը: Գրանեհայ հոս գոյական է՝ նաւորդեայ, աւետչեայ ևն բառից պէս. այս է բառին իրական կազմն ու նշանակութիւնը: Բողուածագիրը կ'ուզէր գրանէին-զոր ուղղական կարծած է - ջնջել, ու տեղը՝ այլուր գործածուած գրանեների ձևը դնել որ «ընթացիկ» է: Բայց ո՞չ. հայերէնը ճոխ է, և երբ միևնոյն բառը մեզ երկու տարբեր ձևերով կը ներկայացունէ, իրաւունք չունինք անսովորը, պարզապէս զայն չհասկնալու համար, ջնջելու. ինչպէս պիտի չկարենայինք երբեք ոսկեակ, ոսկե, ոսկեայ, ոսկեղինիկ և ոսկի բոլոր ձևերը գոհել՝ միայն ոսկեղէն բառը պահելով:

Հայկազեանին մէջ չէ նշանակուած Գրանեայ, և մենք՝ յարգալիւր պատկառանք միայն կրնանք զայն յաւելուլ՝ առանց ո և է յախուռն դիտողութեան:

Յետոյ, իր 10 Թուին ներքև կ'առնու «ԳԻՆ ԵՒ ՎԱՃԱՒ» բացատրութիւնը, ու կ'ուզէ զայն գիտնալու սրբագրել: Յիշեալ ձևը՝ «ընդօրինակչին» «մուրդութեան» կը վերագրէ. Սակերբրանի. սոյն տեղը «շատ մութ» կու գայ իրեն, «նախադասութիւնը անիմաստ» կը վճռէ, և «հրատարակչը, Հայկազեանն ու Զախջախեան» յանցաւոր կը դատապարտէ:

Սակայն ցաւով սրտիս պիտի ըսեմ, որ Արգոյ Վարդանեանի այդ յարձակումը վայրապար է, և յոյժ մեղադրելի:

Ահա խնդրական նախադասութիւնը բուական.

ՄԻ. ՄԻ. Ա. Ե՛ 326

Աւերհոյս Բարձրագ.

1. Արգոնի ապագրութիւնը աւելի արդի է, և նորաւոր ձևերը ու հրատարակութեանց շնորհիւ՝ կրցնոր է շատ մը բառեր յաւելուլ, որ Հայկազեանի ճշգրտակց կաց այս կամ այն կերպով՝ մատչելի չէին եղած:

«Զի թէպէտ և ո՛ր ինչ ձեռք իցէ, այն իսկ մեծ ձեռք է, զի ընդ երկրաւորսն միշտ բնեւեալ կայ, և աւ.

«Որովհետեւ՝ քնաւ ձեռք մ'ալ չըլլայ՝ այն իսկ մեծ ձեռք է, որ միշտ երկրաստոր ընդ մեզ բնեւեալ

զաւանձաւայ լեւալ, և յերկնից բարութեանցն անկեալ, և ոչ ինչ ի բարձանց երաւնութեանց զմտաւ ածեալ, այլ հակառակ՝ յինչաւ և ի սոսկոյն և ի փոխս և ի շահս և ի գին և վաճառս և անգաւտիս ծնողաւ»:

Կեցիք է, և այն որ (ի բնէ) ազատ է՝ ծառայ է զարձած, ու երկնցի վայելչեանցն զրկուած, իսկ վերի երջան, կոթեանց մասին՝ Հոգն անգամ լէ, այլ ընդ հակառակն՝ անարգաբար (ստոր, կորէն) ընկեց ու սոսկոյն, բոլ, փոխաւորեանց ու շահերու և անպատարի եւ անէն է ինկած»:

«Գին և վաճառ» գինեկամառեւ շատ տարբեր է: Առաջինը հայկական ընտանի ոճ մ'է գնել և վաճառել բայից արմատն, զոր ուրիշ տեղ մ'ալ կը գտնենք. «զի ոչ էր նոցա ոչ էլ և ոչ մտաւ, ոչ գին և ոչ վաճառ» Ա. Մկր. ԺԳ. 49. յն. *εχολύοντο εκπορεύεσθαι και εισπορεύεσθαι, και αγοράζειν και πωλείν*, և լու. «*Prohibebantur egredi et ingredi, et emere ac vendere*». ուր հայերենի մէջ փոխանակ ըսելու «ոչ էլանել ոչ մտանել, ոչ գնել և ոչ վաճառել», սովորական ոճով՝ «գին և վաճառ» «ել և մտաւ» գործածք է: Աշխարհաբարի մէջ ալ սովորական է, «առուտուր», «սուրեւանութիւն» (սակ. ալիշվերիշ) ընել, Լատիներենի իրաւաբանական ընտիր լեզուն ևս՝ ճիշտ համապատասխան ոճն ունի *emptio-venditio* = գին և վաճառ: Իսկ երկրորդը, «գինեկամառ», «գինի վաճառող» ըսել է: Թողւածագրին յիշած օրինակները, (Մեկն. Մտթ. 581) «զգինեկամառս ամօթալից հանգանակաց», և Մեկն. Պաւլ. Ա. 452 «ի գինեկամառս հատանել», ամենին կապ չունին գին և վաճառ ձևին հետ: Սա, ընդհանուր կերպով վաճառականութիւն կը նշանակէ, իսկ անոնք՝ մասնական կերպով գինոյ վաճառականութիւն տեկ. «մէյսաւաճիլիկ» անոր համար ալ՝ ամօթալից ածականով կ'որակէ զայն:

Ակայ յանդիմանական շեշտով մը կը յարէ. «կը գարմանամ... ինչպէս հրատարակիչն, Հի ու Զախշախան, յոյն բնագրին ներկայութիւնը վայելելով հանդերձ՝ չեն անդրադառնար նման խանգա-

րումի՝ և անփոփոխ յառաջ կը բերեն զայն»: Յունարէնը, գին և վաճառի տեղ՝ *καπηλεία* ունի, իսկ գինեկամառի՝ *κάπηλος*: Երկուքն ալ, թէ ընդհանուր կերպով ասոսոր կը նշանակեն, թէ յատկապէս, (մանաւանդ *κάπηλος*) գինեկամառ. *καπηλεία* = *commerce de détail*, *petit commerce de vin et d'épicerie*, իսկ *κάπηλος* = *qui vend en détail*, *débitant de vin, cabarattier*. տ. բոգ. A. Bailly, տպ. 1906, էջ 1018, ս. 2: Բայց Hederico աւելի որոշ կը գրէ, էջ 406, ս. 2, *κάπηλος* = «qui in foro *ad vendendum et emendum* operam suam locant». Արդ, ըստ տեղւոյն՝ բարդ կընայ բանի մի կամ միւս իմաստով. և ոսկեղարու թարգմանիչը՝ որ հելլեն ոճին աւանդական իրաւութեանց մէջ անգամ գին է միշտ ճարտար հմտութեամբ թափանցել, մեզմէ շատ աւելի լաւ կշռած է գործածած բառերուն իմաստը. և մեծ յանգնութիւն պիտի ըլլար, կարծեմ, մեր կողմանէ, գինին ստիպել որ յունարէն բառը մեր ուզած իմաստով փոխած լինէր ի հայ:

Անգղատիկա հոս մտկայարար է, ինչպէս «ամբարտաւան փքալ», «բազումս առաքինանալ», «ապառառս պատասխանել» ևն. տ. Զարգացելոց էջ 223-4, թ. 518:

Ուրեմն «գին և վաճառ»ը զուտ հայկական ոճ է. Ոսկերբերանի նախադասութիւնը շատ իմաստալից է և որոշ. հրատարակիչը, Հայկազեանն ու Զախշախան՝ իրաւամբ գրած են այս մասին:

Իր 11 թիւը ԳՈՒՄԱՐԵՄ բայով գրադած է. «Հեծեղազօր գումարէր ի վերայ նորա» (Եւսեպ.). «Հեծեղաւ և սպառաւ զէնս գումարեաց երթալ ունել զմարգարէն» (Ոսկեր.): Թն. Ասոր. բաղդատեիւն վերջ՝ կը «վճռէ», թէ առաջնոյն մէջ՝ գումարէր՝ ասորքը ըսել է, երկրորդին մէջ՝ ժողովուրդ, Բայց յն. ասոր. բաղդատութիւն, ըստ իս,

1. Իմս՝ խանգարում մը. որովհետեւ կրնանք ըսել անգարարձը քաւ վրոգ, բայց կ'ըսենք՝ բան մը չէճ ան-

զրադանար, բան մը կ'անգարադանամ (Անորոշ Հայ-ցախանգ):

անպէտ էր, քանի որ գումարն հայերենի մէջ ի բնէ միշտ կուտար, ժողովի կը նշանակէ: Իսկ կրաւորական ձևով, ըստ տեղւոյն՝ սովորաբար պատերազմի պատրաստիլ ևս կը նշանակէ, ուր երբայ, խողով, դիմել ևն բայից մին կամ միւսը լռելեայն կ'իմացուին: Ինչպէս երբ կը կարդանք, «Եղիցի անձն ընդ անձին դուրա, կամ (թէ գերծանելով գերծցի) տաղանդ մի արծաթոյ կ'սկսցես» (Գ թգր. Թ, 39), հոս, հարկաւ, միայն կ'ընել չենք հասկնար, այլ լռելեայն կ'իմացուին «և հատուցես ինձ» կամ «և տացես ինձ» ևն: Սակայն չենք պահանջեր որ կ'ընել բային դիմաց՝ բառ գիրքները հատուցանել կամ տալ ղենն: Նոյն ոճով մտածելու էր նաև գումարն բայի մասին: Բայց այս մասին արդէն պէտք եղածը ըստ որոշ կերպով զրած է Հայկազեան Բուս:

Հուսկ, 13 Թիւր՝ ԳՐԱԿ, գրախօք բառին նուիրած է. կը պահանջէ զայն վիեննայի տպագրութեան հետ կարգօք կարդանք: Զի հաւնիւր Զախճարեան ու Զագրճեան հեղինակներուն, որք «ընդունած են իբրև պատգամ Հայկազեանի մեկնութիւնը»։ Այս միայն ըսեմ, որ իմաստուն մարդուն խօսքը պատգամ ընդունողը՝ այնու իւր իսկ անանարոյն մեծ ապացոյց կու տայ: Գրակ ընթերցումը կ. Պոլսի 1727 հրատարակութենէն առած է Հայկզ. բոգը. և ուրիշներէ նախընտրած: Բառիս թէ՛ հայերէն կազմը, թէ՛ իբր յունարենէ թարգմանութիւն՝ ըստ կանոնաւոր է:

Այ մասնիկը փաղաքշական է մեր մէջ. հմմ. որդի՝ որդեակ, հոգի՝ հոգեակ, արև՝ արեակ, Հայկ՝ Հայկակ, և, «յոյր ձեռն թողեր զսակառ ոյխարակն յանապատի անդ» (Ա թգր. ԺԷ, 28). «սակառ ոյխարակօք» կարծեմ «սակառ գրախօք»էն տարբերութիւն մը չունի: Թունարենի մէջ στοιχεῖον կը նշանակէ petit trait agné, caractère d'écriture, lettre ևն. իսկ στοιχος յատկապէս գրակ ըսել է, այսինքն՝ փոքր գիր մը, համառօտ գրութիւն մը, քանի մը տողոց բան. στοιχος, (particulièrement) = ligne d'écriture,

vers. տ. բոգ. A. Bailly, էջ 1794, ս. 3, և 1795, ս. 1: Ասոր համար է որ կ. Պոլսի տպ. օրինակին մէջ, (անընշտ Հայկազեանի հեղինակներէն մէկը) գրախօք բառին դիմաց կը դիտէ, թէ ձեռագիրն որ կարգօք կը գրէ՝ սխալ է, որովհետև յու նարէն բնագիրն στοιχος ունի: Միւր խընդունյ մէջ ձեռագիրները՝ տպագիրներէ մեծ առաւելութիւն մը չունին. մեր ձեռագրաց հնագոյնը՝ 1722ին է, իսկ կ. Պոլսի տպագիր օրինակը՝ 1727ին է: Վիեննայի ձձ. ևս անշուշտ ԺԻ—ԺԳ դարուն պիտի չըլլան, այլ մերիներուն նման ԺԻ դարուն. որով հաւանական է կ. Պոլսի հին տպագրութիւնը ընտրելագոյն զըջագիրներու վրայէն եղած ըլլայ: Ուստի Վարդանեանի ի դուր կը պահանջէ որ Հայկազեանին իրենց հրատարակութեան հետևած լինէր: Բայց աստի այդ հրատարակութիւնն ալ կը տարբերի ուրիշներէն, այսպէս օր. հմ. մինչ տպ. կ. Պ. էջ 96, և մեր ձձ. ԹԹ. 1648, 1739, էջ 48, 54 կը գրեն. «Արդ որովհետև ամենեքին գիրս ընթերցող կարեն», վիեննայինը՝ էջ 84, «Արդ որովհետև ըն ամենեքեան գիրս ընթերցող կարեն». կատարեալ հակասութիւն: Նոյնպէս, մինչ նոյնք յէջ 108, 54, 63 կը գրեն «Յայնքան նկոն նմանութիւն», վիենն. 97 «Յայնքապ նկոնութիւն», և այս բառը միայն այդ ձեռագրէն ծանօթ է Հայկզ. բոգքի. ուրիշ օրինակ չունի: Ասկից պէտք է իմանալ թէ՛ ո՛րքան խնամքով, որպիսի խոհմուտ թեմամբ և ընտրողութեամբ եղած է Հայկազեանը: Բայց զեռ աւելին կայ:

Վերև տեսանք որ Հ. Ա. Վարդանեան վրղը. խստիւ կը մեղադրէր Ոսկերեանի հրատարակութիւնը իբր անխնամ. լոկ դիպուածով կը բանամ վիենն. տպ. «Կոչուեմ ինձայութեան» 97 էջը, և անա գիմացս կը տնկուին երեք և աւելի սխալներ: Մինչ տպ. կ. Պ. էջ 108-9, և մեր ձձ. ԹԹ. 1648, 1739, յէջ 54, 63 կը գրեն.

ԳՂ. ՎԻԵՆ. ԷՋ 97
տ. «Մարդ զգար քան
զակել առ աստուածացոյց»

ԳՂ. Կ. Ա. ԵՎԷԷ
«Մարդ զգար քանզա
կել առ աստուածացոյց»

բ. «Արեւմտեայ և արա-
լայ... երկրորդականներն»
գ. «Գլխավոր փոխա-
նակ Աստուծոյ երկրորդա-
նակներն ընդունի»
* «Յայնչափ Կենտրոն-
թիւն»

«Արեւմտեայ և արա-
լայ... երկրորդականներն»
«Գլխավոր փոխա-
նակ Աստուծոյ երկրորդա-
նակներն»
«Յայնչափ Կենտրոն-
թիւն»

Այս ամբողջ մէկ էջի մէջ՝ Վիեննական հրատարակութեան հեղինակութիւնն, ու-
րեմն, զրափոք բառին նկատմամբ՝ ասոնց
հասարակ է. արդ մենք ինչպէս կրնանք
վստահիլ անոր:

Շատ զգալի է, ըստ իս, Արդոյ Յօդուա-
ծաբարն զրոյթեան մէջ, նախ, հայկարա-
նական գէթ միջակ հետազոտեան, և երկ-
րորդ, քերականական ընդարձակագրոյն
ծանօթութեան պակասը:

ՄԵՐԺԵԼԻ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

(Համը. Ամսօրէի յօդուածի մ'առթիւ)

«(Ապա, թէ՛)» բոց ունէր մօրուս,
«Եւ աշխուճն էին արեգակունք»:

Մ. Խոր. Ա. զլ. ԼԱ.

Հրատարակիչները, միայն ապա թէ կը
համարին խորհնացուոյն յաւելուածն ըլլայ,
իսկ մնացած մասը՝ Գողթեան երգիչներուն:
Հ. Արեւմտեայ վրդ. (Հ. Ա. 1929, Թ. 5, էջ
320), կ'առաջարկէ «ունէր» ալ ջնջել,
«արեգակունք» ալ՝ արեւոյ ակունք կարգաւ,
Առաջարկելն անմեղ բան է, բայց պատ-
ճառարանելու կերպը՝ քիչ մ'անսովոր:

Կը համարի նա թէ խորհնացիւն իր կող-
մանէ աւելցուցած ըլլայ ունէրը՝ «մի միայն
երգին տանուն ընթացքը խանգարելու», և և
դասական լեզուին նկարագիրը եղծանելու
համար:

Չափազանց է այդ վեճը, և շատ ա-
նիթա՝ դատաստան, մեզմէ 1500 տարի
առաջ ապրած ստորի մը վրայ:

Դասական ըսելով, Արդոյ բանասէրը

անշուշտ Առաջին Թարգմանչաց լեզուն կ'ի-
մանայ. լաւ. Ահաւասիկ, առանց շատ յոգ-
նելու կը գտնեմ ունէրը ածականի և գոյա-
կանի մէջտեղը գործածուած:

Այսպէս օր. հմ. Ոսկր. հտ. Գ. էջ 120
«որ այնքան ունէր հոգս». էջ 620 «թէ
յուրով արդեօք ունէր ուղղութիւնս». դար-
ձեալ՝ «յուրով ունիցիս առ Աստուած հա-
մարձակութիւն», փոխանակ ըսելու՝ որ
այնքան հոգս ունէր, կամ՝ թէ արդեօք յո-
րով ուղղութիւնս ունէր, կամ՝ ունիցիս առ
Աստուած յորով համարձակութիւնս. և վեր-
ջապէս նոյն էջին մէջ (620) դեռ աւելի
հանդիսաւոր կերպով կը գրէ ոսկեղաբու
Թարգմանիչը. «Խորհարհութիւն է՝ յորժամ
որ յուրով և մեծամեծս ԳիՏՆԸԼՈՎ զինքեան
ուղղութիւնս, ոչ ինչ մեծագոյնս յաղագս
նոցա զմտած ածիցէ»: Ուր «յուրով և մե-
ծամեծս» ածականները մէկ կողմ, «ուղղու-
թիւնս» վերացական անունը միւս կողմ,
և «զիտեղով» բայը երկուքին միջև, ճիշտ
պատուարժան առաջարկողին պահանջա-
ծին հակառակ՝:

Ուրեմն Գողթեան երգին «Ապա թէ բոց
ունէր մօրուս»ը դասական լեզուին շատ հա-
մաձայն է, և հետեւաբար՝ ո՛ր և է փոփո-
խութեան անկարօտ:

Հասարակապէս մերժելի է և միւս ա-
ռաջարկը, Արեւոյ ակունք ընթերցումը: Ու-
րովհետեւ առ այս, նախ՝ ձեռագրաց հեղի-
նակութիւնը պէտք է. երկրորդ, հայեւնի
մէջ այնպիսի սո՛ւ չենք գտնել. եւ եր-
րորդ՝ եղած ձևովը շատ լաւ իմաստ կու
տայ: Ամբողջ երգին մէջ կը տեսնենք որ
դիպագնը կրակի հետ կը բաղդատուի, «հոտ
հեր», «բոց մօրուս»: «Եւ աշխուճն էին ա-
րեգակունք», ըսել է. «Աշքերն ալ մէկ մէկ
արեգակներ էին». մինչ Յօդուածագրին ա-
ռաջարկածը, «բոցաշառնակ շարի», յար-

1. «Կուրծն ընծայութեան» ոսկեղաբու Թարգմանու-
թիւն է, սակայն նկատարեմ զյուրեան լուծի այն լե-
զուին մէջ, և հրատարակիչը պէտք էին ի նկատի ունել
ձեռագրաց տարբերութիւնը և Հայկազունի միակ վկա-
յութիւնը:

2. Դեռ յօդուածն չհրատարակած, կը կարգած Հանգ.
Ամս. Թ. 6-7, էջ 327, ս. 1. զէջ դասական լեզուին

Հոգեւոր արտագծօքն հակառակ է բայի միաստորեան-
գոյաբանին ածականին բաժանումը, Աս ալ ըսել կ'ուզէ
Թէ ածականն ու գոյական միշտ ըստ ըստ պէտք են
լինել. Ո՛վ ըսաւ. ինչո՞ւ, Վերեւ քերական. օրինակներս
յուսած բառական են որոյն կանոնին աւելորդ և անճիշտ
ըլլալը ցուցնելու:

գանձօր ըսած ըլլամ, բռնագործիկ մեկնու-
թիւն է. որովհետեւ աւելի արեգակն է որ
հրոյ հըզըրտ գաղափարը կու տայ, ոչ թէ
քարերը:

Ուստի, թէ դասական անուամբ զեղծա-
նելով՝ չենք յաւակնիր նոր Գողթան եր-
գիչներ ըլլալ, պէտք ենք, ըստ իս, հիները
հանգիստ թողուլ. ապա թէ ոչ՝ բարորա-
հար մատները կը սխալին, թեւեւն ու
ձայներ կը շփոթին և վահագներ մեզ կը
դիպի ծանրացասում:

Հ. ԳԻՐՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

Ծան. Նախորդ յօդուածին մէջ (Յգմ. յունիս, էջ
172, Բ. ս. Իս.) վերականգն վտանգ գրուած է, զոր ուղ-
ղելու է վտարել:

ԳՐԶԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

ԲԱԺՆԱԳԻՐ

(Bajnágur)

(Շար. տես Բազմ. 1929 էջ 174)

Ուրբերորդ Նկար. 8×4 հրդեր. խաչկոչ-
քին. դեղնորակ խորքի վրայ՝ պարիսպի տ-
աւաններ՝ (բաց վրդգն.)։ յատակին մէջտեղը՝
Գողգորթայի ժայռը՝ խալը մէջը ամրացուած է
վրան՝ Յիսուս գամուած. ձեռքերուն ու ոտքե-
րուն գամուած տեղերին և աջ կողմէն արիւն կը
կարկրի՝ շնդ դէպ ի խալը. լուսասպասկ գրուած
դէպ ի աջ հսկած, ալիքերը փակ. մէջքէն վար՝
կարմիր խալով ժածկուած մինչև ժուկները խա-

չին աջ կողմը կին մը՝ լուսասպասկ, լայական,
ձախ ձեռքեր ալիքին, աջ ձեռքովը Յիսուսի քրանց-
քին հուպ, կարմիր վերնոցով՝ կապոյտ շրջա-
զգեստով: Խաչին ձախ կողմը՝ նոյնպէս կին մը.
լուսասպասկ գրուած՝ հսկ, տխուր. աջ ու ձախ
ձեռքերը ամփոփած, կապոյտ վերնոցով՝ կար-
միր շրջազգեստով, ԹԻ՝ Յիսուսի և ԹԻ՝ նրկու
կիկնկուռն մարմինները քուխ են. Նուրբ և ար-
տաշայտիլ դիմագծերով նկար. Բաժնուած է
յաջորդ արօքքին՝ վարդաձաղիկ շնորոգով մը
 1×4 հրդեր. լուսանցի լուսանց երկարած:

ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱՆ Հայրն՝ ամենակալ
արարողն երկնի և երկրի երեւելաց և աներևու-
թից...² և ⁴:

ԱՂԱԽԹԹ ԹԱՂԱՅԻՆ Է՝

Աղաթք սբ. Կիպրիանոսի՝ գոր կարգան յա-
ւուր կիրակէի յետ ժամու վասն դիւացն և վասն
կախարդացն և աղանդաւորացն որ կապեն զոր-
դիս մարդկան զհազար և զհարիւր եօթնաստուն
երկու՝ կապք կանանց՝ և կախարդացն և աղան-
դաւորացն արդ արձակեալ և հեռացեալ լիցի
ամենայն չար և կախարդութիւն որ ոչ մերձ-
նայ ի ծառայն՝ Աստուծոյ Ալլահմերտի ամէն.
Յանուարս արձակեցաւ ինքն արձակեցաւ ի
վերայ աստեղացս. յաստեղս՝ արձակեցաւ ի
վերայ լուսնի, լուսնին արձակեցաւ՝ ի վերայ
արեգականն. արեգակն՝՝ արձակեցաւ ի վերայ
ամպոյ, ամպն արձակեցաւ՝ ի վերայ շրոց, շուրն
արձակեցաւ ի վերայ երկրի, երկիրս արձակե-
ցաւ ի վերայ հրոյ, հուրն արձակեցաւ ի վերայ
խաւարի, խաւարն արձակեցաւ ի վերայ լուսոյ,
լոյսն՝՝ արձակեցաւ ի վերայ՝ անմահ բանին
Աստուծոյ, բանն Աստուած Յս. Պս. զամենայն
կապեալս արձակէ և զտունն դիւացն կործանէ՝¹⁵.
ի ցաւոցն՝՝ ազատէ. Եօթը՝՝ դուռն երկնից և շտ-

1. Հ. զիրք Թուրքեր, եռագոյն:
2. Երկու գոյն կարմիր մեւաւով զրուած՝ Հաւատամք
-ն մինչև հայ(քն):
3. Ու զըբունակութի ամբողջ Հաւատամքը, որուն
ժառօք մէկն հետ ունեցած մէկ-քանի տարբերութիւններն
են, - արարողն երկնի. Ի Մարիամայ ի սրբայ կուսեն.
հմարտապէս եւ ոչ ի կործաւ ունեղով. ոչ գոյ վաղան.
ի դատարանս յաւիտեական. կամ քի ոչ յոյ կից եղեն.
կամ ի գոյտրեմն. քի աշխարհի կամ փոփոխելի զանպիսի
աստղոգան ոչ ընդունեն այլ եզրով կարողելի եւ առաջե-
լովմ աբ. եկեղեցի:
4. Ամբողջապէս՝ և ազգին կէսէն՝ կը սկսի, կարմիր
մեւաւով, Աղթք Թապալի:
5. Աղաթքն ա-ի և Թապալի պ-ն ու ա-ն վրայ՝

- եռաշէշ ("") Տողաղարմուած է՝ Թապալի:
6. Ա-ը ծաղկազրի՝ եռագոյն, դաթք՝ արիւնազոյն,
սբ. կի՝ կարմիր մեւաւով Տողաղարմուած՝ կի-արիւնոսի:
 7. Սղուած՝ գ. և գ. հր:
 8. Տղղմ. կամ-ն:
 9. Տողաղարմուած՝ ծառ-այն:
 10. Տղղմ. յատեն-դա:
 11. Գրուած՝ արձակեց:
 12. Տղղմ. արեգ-ամբ:
 13. Տողաղարմուած՝ լոյ-ամ:
 14. Վերայ աղուած՝ վր. ամեն անգ:
 15. Եթեմեակ մը տառի չափ տեղ բաց ձգուած:
 16. Տղղմ. ցառ-ոցն:
 17. Սղուած՝ և վրան պատկերով: